REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE
МАЯКОВСКИЙ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔ

հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

N 183
15 դեկտեմբերի 2015թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Պետրոսյան

Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջի համաձայն , Ձեզ է ներկայացվում Մայակովսկի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 9 -ի հերթական նիստի որոշումները :

Առդիր. 1 ֆայլ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

.Կատ. աշխ. քարտուղար
Վ. Փայտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09» դեկտեմբերի 2015 թվականի N 50-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով ***համայնքի ավագանին որոշում է.***
Հաստատել համայնքի ավագանու հերթական 16-րդ նիստի *օրակարգը*.

1. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղապետարանի աշխատակազմի 2016 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի մանկապարտեզի /ՀՈԱԿ/ աշխատակազմի 2016 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղական համայնքի 2015 թվականի տարեկան գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղական համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին
7. Գույքահարկի գծով արտոնություններ տրամադրելու մասին

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Գ.Մայակովսկի
2015թ.դեկտեմբերի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«09» դեկտեմբերի 2015 թվականի N 51 -Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 409 000 (չորս հարյուր իննը հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10 - ի « Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին» N 42-Ա որոշումը:

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՋԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2015թ.դեկտեմբերի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » դեկտեմբերի 2015 թվականի N 52-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղապետարանի աշխատակազմի 2016 թվականի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2015թ.դեկտեմբերի 9

Մայակովսկի համայնքի ավագանու
2015թվականի դեկտեմբերի 9-ի N 32-Ն որոշման
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ

1. Աշխատակիցների քանակը – 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	Գյուղապետարանի աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական	-	1	409000	-	-	409000
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական	-	1	185000	-	-	185000
3		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	180000	-	18000	198000
4		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	170000	-	17000	187000
5		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-2	1	170000	-	-	170000
6		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	135000	-	13500	148500
7		2-րդ կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.3-1	1	90000	-	9000	99000
8		2-րդ կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.3-3	1	90000	-	-	90000
9		2-րդ կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.3-4	1	90000	-	9000	99000
		Տեխնիկական անձնակազմ	սպասարկման						
10		Գյուղապետարանի պահակ	Տեխնիկական սպասարկման	-	1	125000	-	-	125000
11		Գյուղապետարանի հավաքարար	Տեխնիկական սպասարկման	-	1	73000	-	-	73000
12		Գերեզմանատան աշխատող	Տեխնիկական սպասարկման	-	1	73000	-	-	73000
13		Վարորդ	Տեխնիկական սպասարկման	-	1	250000	-	-	250000
	Ընդամենը				13				2 106 500

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » դեկտեմբերի 2015 թվականի N 53-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով,

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի մանկապարտեզի աշխատակազմի 2016 թվականի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2015թ.դեկտեմբերի 9

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Անդամների հանձնաժողովի ավագանու
2015թվականի դեկտեմբերի 9-ի N 53-Ա որոշման

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ / ՀՈԱԿ / 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը – 1
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Մանկապարտեզ ՀՈԱԿ	Մանկապարտեզի վարիչ		-	1-075 դրույքով	73000			73000
	Ընդամենը								73000

ՄԱԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » դեկտեմբերի 2015 թվականի N 54-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջինին մասի 29-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Մայակովսկի համայնքի ղեկավարի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N 24-Ա կարգադրությամբ ստեղծված գույքագրման հանձնաժողովի կողմից կազմված 2015 թվականի համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը , համաձայն հավելվածի :

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՋԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2015թ.դեկտեմբերի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » դեկտեմբերի 2015 թվականի N 55-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքով , « Աղբահանության և սանիտարական մաքրման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով, 8-րդ հոդվածի 7-րդ մասով, 14-րդ հոդվածով , ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղական համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ		
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ		
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ		
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2015թ.դեկտեմբերի 09

ՀԱՎԵԼՎԱԾ
Մայակովսկի համայնքի ավագանու
2015թվականի դեկտեմբերի 9-ի N 55-Ն որոշման

Մայակովսկի համայնքում 2016թվականի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

Հ/հ	Տուրքերի տեսակները	Ավագանու սահմանված դրույքաչափը (դրամ)
1	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝	
	հիմնական օբյեկտների համար՝	
1)	մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	15000
2)	սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝	
ա.	201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	30000
բ.	501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	50 000
գ.	1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև	50000
դ.	3001 -ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	1 00 000
	ոչ հիմնական շինությունների տեղադրման համար	
3)	մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	3000
4)	20քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	5000
2.	Համայնքի վարչական տարածքում սենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերա-կանգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ << օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով	
1)	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն	3000
2)	բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության	

	փոփոխություն: ապա բացի սույն կետի ա՝ ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով	
3)	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,սույն հավելվածի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն,, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:	
3.	Համայնքի տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար	5000
4.	Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝	
1)	Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝	5000
2)	ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝	5000
5.	Համայնքի տարածքում	
1)	բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար	350
2)	հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	200 000
3)	խանութներում կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է	30 000
ա.	համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝	
	հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝	6000
	ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում	1000
6	համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլատվության համար	50 000
7.	համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները(սաունաները) , խաղատները՝ ժամը 24.00 -ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար	
1)	առևտրի օբյեկտների համար	25 000

2)	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	100 000
3)	բաղնիքների (սաունաների)համար	200 000
4)	խաղատների կազմակերպման համար	500 000
5)	շահումով խաղերի կազմակերպման համար	250 000
6)	վիճակախաղերի կազմակերպման համար	100 000
8.	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ քառակուսի մետրի համար՝	
1)	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	1000
2)	թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2500
3)	այլ արտաքին գովազդի համար	500
4)	դատարկ գովազդային վահանակների համար	700
9.	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար	1000
10.	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղական համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	100 000
11.	Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	10 000
	Տեղական վճարներ	
1.	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար	5000
2.	Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինման և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5000
3.	Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար	1000
4.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝	

1)	- կենցաղային աղբի համար հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական	100
2)	- ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ ամսական	2000
5.	Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել	500

ԱՇՏԱՐԱԿԱՊԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՎԵՆԵՐԱ ՓԱՅՏՅԱՆ

Կ.Տ

Գ.Մայակովսկի
2015թ.դեկտեմբերի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » դեկտեմբերի 20 15 թվականի N 56-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 55-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է .***

1.Հաստատել Մայակովսկի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն՝համաձայն հավելվածի,
2. Թույլատրել Մայակովսկի համայնքի ղեկավարին 2016 թվականի բյուջետային տարում անհրաժեշտության դեպքում սույն որոշմամբ հաստատված հավելվածներում բյուջեից հատկացումները վերաբաշխել բյուջետային ընդհանուր ծախսերի մինչև 10%-ի չափով,
3. Թույլատերլ համայնքի ղեկավարին իր որոշումներով 2016 թվականի բյուջեի սոցիալական պաշտպանության ոլորտում նախատեսված գումարը ծախսել արդյունավետ , տրամադրելով համայնքի կարիքավոր ընտանիքներին,
4. Եռամսյակը մեկ անգամ ավագանու նիստում լսել համայնքի ղեկավարի կողմից հաղորդած տվյալները բյուջեի կատարման մասին,
5. Սույն որոշման հավելվածը համարվում է սույն որոշման անբաժանելի մասը:

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՋԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2015թ.դեկտեմբերի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » դեկտեմբերի 20 15 թվականի N 57-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին** ***որոշում է՝***

1. Սահմանել գույքահարկի [illegible] գծով արտոնություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2015թ.դեկտեմբերի 9

ՀԱՎԵԼՎԱԾ
Մայակովսկի համայնքի ավագանու
2015թվականի դեկտեմբերի 9-ի N 57-Ա որոշման

Հ/հ	Ազգանուն, անուն	Հասցեն	Գումարը /դրամ/
1.	Օհանյան Ռուբիկ	Գյուղ Մայակովսկի,2-րդ փողոց, 2-րդ փակ.տուն 3	6 800
	Ընդամենը		6 800

Աշխատակազմի քարտուղար Վ. Փայտյան